ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

Գ. Շախկյան
(անուն, ազգանուն)

«07» հունվարի 2026 թ.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՍԽԵՄԱՅԻ (ՍԽԵՄԱՆԵՐԻ) ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

PR-4.6.3

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր
Նազիկ Աբգարյան
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ՍՏՈՒԳԵԼ Է

Տնօրենի տեղակալ

Ա. Մելքոնյան
(անվանատառ, ազգանուն, ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է

Արտադրանքի, կառավարման համակարգերի, անձանց սերտիֆիկացման մարմինների խորհրդատվական տեխնիկական կոմիտեի հետ

Գործարկման թվականը 07.01.2026թ.

Երևան 2026

Բովանդակություն

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ 3
2. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ 4
3. ՏԵՐՄԻՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ և ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ 5
4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՍԽԵՄԱՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ 7
4.1 ՆՈՐ ՀԳՍ-Ի ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 7
4.2 ՀԳՍ-Ի ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 10
4.3 ՍՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԳՍ-Ի ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ և ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ (2 ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ) 12
4.4 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ/ՄԵՐԺՈՒՄ (1 ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ) 12
4.5 ԳՆԱՀԱՏՎԱԾ ՀԳՍ-ԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 12
4.6 EA 1/22, IAF MD 25 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԳՍ-ՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 12
5. ՍԽԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՍՀ) ԿԱԶՄԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 13
6 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (IAF ՄԱԿԱՐԴԱԿ 3 և 4) 14
6.1 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 14
7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ 20

1. Կիրառման ոլորտը

1.1 Սույն ընթացակարգը սահմանում է «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) կողմից համապատասխանության գնահատման սխեմաների (այսուհետ՝ ՀԳՍ) գնահատման կանոններն ու չափանիշները:

1.2 Ընթացակարգը մշակվել է ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի 4.6.3 կետի և EA-1/22, IAF MD 25 պահանջներին համապատասխան: Սույն ընթացակարգը կիրառելի է համապատասխանության գնահատման սխեմաների մշակման գործընթացում ներգրավված անձնակազմի, սերտիֆիկացման մարմինների (ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065, ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-1, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17024) ու հսկողություն իրականացնող մարմինների համար (ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020):

1.3 Սույն ընթացակարգը կիրառելի չէ ստանդարտ նմուշներ արտադրողների, որակավորման ստուգում իրականացնողների կամ վավերացում (վալիդացում) և ստուգում (վերիֆիկացում) իրականացնող մարմինների կողմից մշակված նոր մեթոդների/ընթացակարգերի/համապատասխանության գնահատման գործունեությունների համար (ՀՍՏ ԻՍՕ 17034, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17043, ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17029): Փորձարկման, տրամաչափարկման, բժշկական լաբորատորիաների կողմից մշակված մեթոդների, ոչ ստանդարտ մեթոդների գնահատումն իրականացվում է համապատասխանաբար ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025 կամ ՀՍՏ ԻՍՕ 15189 ստանդարտի պահանջների համաձայն:

1.4 Նոր ՀԳՍ կիրառելու դեպքում համապատասխանության գնահատման մարմինը (այսուհետ՝ ՀԳՄ) իր հայտատուին պարտադիր տեղեկացնում է այն մասին, որ տվյալ ՀԳՍ-ն գնահատվել է ԱՐՄՆԱԲ-ի կողմից և տեխնիկական ու օրենսդրական տեսանկյունից համապատասխանում է սահմանված պահանջներին:

2. Նորմատիվ վկայակոչումները

Առանց տարեթվի վկայակոչված փաստաթղթերը կիրառելի են միայն վերջին հրատարակությամբ: Սույն փաստաթղթում վկայակոչված են հետևյալ փաստաթղթերը՝

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 (ԻՍՕ/ԻԷԿ 17000, IDT) Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ

ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 (ԻՍՕ/ԻԷԿ 17011, IDT) Համապատասխանության գնահատում. Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում իրականացնող հավատարմագրման մարմիններին ներկայացվող ընդհանուր պահանջներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020 (ԻՍՕ/ԻԷԿ 17020, IDT) Համապատասխանության գնահատում. Հսկողություն իրականացնող տարբեր տեսակի մարմինների գործունեությանը ներկայացվող պահանջներ

ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-1 (ԻՍՕ/ԻԷԿ 17021-1, IDT) Համապատասխանության գնահատում. Կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին ներկայացվող պահանջներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17024 (ԻՍՕ/ԻԷԿ 17024, IDT) Համապատասխանության գնահատում. Անձանց սերտիֆիկացում իրականացնող մարմիններին ներկայացվող ընդհանուր պահանջներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065 (ԻՍՕ/ԻԷԿ 17065, IDT) Համապատասխանության գնահատում. Արտադրանքի, գործընթացների և ծառայությունների սերտիֆիկացման մարմիններին ներկայացվող պահանջներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17007 (ԻՍՕ/ԻԷԿ 17007, IDT) Համապատասխանության գնահատում. Համապատասխանության գնահատման համար կիրառելի նորմատիվ փաստաթղթերի մշակման ղեկավար ցուցումներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17067 (ԻՍՕ/ԻԷԿ 17067, IDT) Համապատասխանության գնահատում. Արտադրանքի սերտիֆիկացման հիմնարար դրույթներ և արտադրանքի սերտիֆիկացման սխեմաների ուղեցույց

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17029 (ԻՍՕ/ԻԷԿ 17029, IDT) Համապատասխանության գնահատում. Վավերացնող և ստուգող մարմիններին ներկայացվող պահանջներ և ընդհանուր սկզբունքներ

ՀՍՏ ԻՍՕ 17034 (ISO 17034, IDT) Ստանդարտ նմուշներ արտադրողների իրազեկությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17043 (ԻՍՕ/ԻԷԿ 17043, IDT) Համապատասխանության գնահատում. Որակավորման ստուգման ընդհանուր պահանջներ

ԻՍՕ/ԻԷԿ 17030 Համապատասխանության գնահատում. Երրորդ կողմի համապատասխանության նշաններին ներկայացվող ընդհանուր պահանջներ

EA-1/06 A+AB EA բազմակողմ ճանաչման համաձայնագիր. Ստորագրման չափանիշներ. Զարգացման քաղաքականություն և ընթացակարգեր

EA-1/22 A+AB EA-ի անդամ հանդիսացող հավատարմագրման մարմնի կողմից համապատասխանության գնահատման սխեմաները գնահատելու համար EA ընթացակարգը և չափանիշները

IAF MD 25 Համապատասխանության գնահատման սխեմաների գնահատման չափանիշները

PR-7 Հավատարմագրման ընթացակարգը և ընդհանուր պահանջները

PR-7.10-7.11 Հավատարմագրման ընդլայնման, կրճատման ընթացակարգ

3. Տերմինները, սահմանումները և հապավումները

Սույն ընթացակարգում կիրառված են ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտներով սահմանված, ինչպես նաև հետևյալ տերմիններն ու սահմանումները.

ստանդարտ՝ փաստաթուղթ, որով սահմանվում են գործունեության տարբեր ձևերին կամ դրանց արդյունքներին վերաբերող համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր՝ ուղղված որոշակի բնագավառում լավագույն կարգավորվածության ձեռքբերմանը, որը մշակվում է փոխհամաձայնության հիման վրա և հաստատվում ճանաչված մարմնի կողմից.

համապատասխանության գնահատման սխեման (ՀԳՍ) § 2.1 EA-1/22, IAF MD 25՝ սույն փաստաթղթի նպատակների համար ՀԳՍ-ն, ինչպես սահմանված է ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000-ում, փաստաթուղթ է, որը ներառում է հետևյալ պահանջները.

- համապատասխանության գնահատման օբյեկտը (օրինակ՝ արտադրանք, գործընթաց, ծառայություն, համակարգ կամ անձ),
- համապատասխանության գնահատումն իրականացնելու պահանջները,
- համապատասխանությունը որոշելու համար կիրառվող եղանակները, օրինակ՝ փորձարկումներ, հսկողություն, վավերացում (վալիդացում), ստուգում (վերիֆիկացում) կամ աուդիտներ, ինչպես նաև համապատասխանությունն ապահովելու այլ գործողությունները,
- սխեմայի սեփականատիրոջ կողմից ՀԳՄ-ին ներկայացրած բոլոր պահանջները և յուրաքանչյուր կոնկրետ հարցում կամ մեկնաբանություն, եթե կիրառելի է,
- ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-ի յուրաքանչյուր պահանջ կամ մեկնաբանություն, եթե կիրառելի է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. ՀԳՍ-ն համարվում է «պարտադիր», երբ դա պահանջվում է օրենքով կամ ազգային կամ միջազգային կանոնակարգերով.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. ՀԳՍ-ն համարվում է «կամավոր», երբ դա չի պահանջվում օրենքով կամ ազգային կամ միջազգային կանոնակարգերով: Կամավոր ՀԳՍ-ն պետք է հաշվի առնի սերտիֆիկացման օբյեկտի հետ կապված ցանկացած պարտադիր պահանջ (գործոն):

Սխեմայի սեփականատեր (ՍՍ) § 2.2 EA-1/22, IAF MD 25՝ ՍՍ-ն այն կազմակերպությունն է, որը սահմանել է ՀԳՍ և պատասխանատու է ՀԳՍ-ի նախագծման համար: ՍՍ կարող են հանդիսանալ հետևյալ կազմակերպությունները.

- ստանդարտացման մարմին,
- ՀԳՄ,
- ՀԳՄ-ի ծառայություններից օգտվող կազմակերպություններ,
- համապատասխանության գնահատման գործընթացն անցած ապրանքներ գնող կամ վաճառող կազմակերպություններ,

- արտադրողներ կամ արտադրողների ասոցիացիաներ, որոնք հաստատել են իրենց սեփական ՀԳՍ-ները:

ԱՐՄՆԱԲ-ը չի կարող լինել սխեմայի սեփականատեր:

<u>Հապավումները</u>

ԱՐՄՆԱԲ - «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

EA - Հավատարմագրման եվրոպական համագործակցություն,

MLA - Բազմակողմ ճանաչման համաձայնագիր,

ILAC – Լաբորատորիաների միջազգային հավատարմագրման համագործակցություն,

ՀՍՏ - Հայաստանի Հանրապետության ստանդարտ,

ԳՕՍՏ - Միջպետական ստանդարտ,

ՀԳՍ - Համապատասխանության գնահատման սխեմա,

ՍՍ - սխեմայի սեփականատեր,

ՀԳՄ - Համապատասխանության գնահատման մարմին,

ՍՀ - Սխեմայի վերաբերյալ որոշում կայացնող հանձնաժողով:

4. ՀԳՍ-ի պիտանիության գնահատման կարգը

4.1 Ընդհանուր դրույթները

4.1.1 Ստորև սահմանված են այն դեպքերը, երբ պահանջվում է միայն տեղեկատվական հաշվետվություն ներկայացնել ՀԳՍ-ի վերաբերյալ որոշում կայացնող հանձնաժողովին.

- եթե ՀԳՍ հիմնված է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում իրավասու ստանդարտացման մարմինների կողմից պաշտոնապես թողարկված նորմատիվ փաստաթղթերի վրա, որոնց հաստատման գործընթացը ներառում է շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություն,

- եթե ՀԳՍ միջազգայնորեն հաստատված է և, հետևաբար, գործում է միջազգային շուկայում, ինչպիսիք են IAF, EA կամ IAF MLA համաձայնագրերի կողմ հանդիսացող այլ հավատարմագրման մարմինների կողմից գնահատված և հավատարմագրման ենթակա սխեմաները,

- եթե ՀԳՍ մշակվել է ազգային (օրինակ՝ ՀՀ կառավարության 16 հունվարի 2014 թվականի «Համապատասխանության գնահատման ընթացակարգերը սահմանելու մասին» N 56-Ն որոշում) կամ միջազգային, եվրոպական օրենսդրության (օրինակ՝ Մաքսային միության Հանձնաժողովի N 621, ԵԱՏՀ Խորհրդի N 44, EMAS, և այլն) պահանջներին համապատասխան:

4.1.2 Այն դեպքում, երբ ՀԳՍ-ն նախատեսված է կանոնակարգման ոլորտների համար, եթե որևէ պահանջ կիրառելի չէ կամ թերի է, դա պետք է բարձրաձայնվի և ներկայացվի ՀԳՍ-ի վերաբերյալ որոշում կայացնող հանձնաժողովին:

4.1.3 ՀԳՍ-ի վերաբերյալ որոշում կայացնող հանձնաժողովին ԱՐՄՆԱԲ-ը չի հավատարմագրում չհաստատված (նախագիծ) ստանդարտներով կամ ՀԳՍ-ներով հայտ ներկայացրած ՀԳՄ-ներին:

4.1.4 ԱՐՄՆԱԲ-ը չի հավատարմագրում չհաստատված (նախագիծ) ստանդարտներով կամ ՀԳՍ-ներով հայտ ներկայացրած ՀԳՄ-ներին:

4.2 Նոր ՀԳՍ-ի պիտանիությունը գնահատելու հայտի վերլուծությունը

4.2.1 Նախքան առաջին անգամ հավատարմագրման կամ հավատարմագրման ընդլայնման (PR-7, PR-7.10-7.11) հայտ ներկայացնելը ՀԳՄ-ն դիմում է ԱՐՄՆԱԲ-ին՝ նոր ՀԳՍ-ի վերլուծության և պիտանիության գնահատման նպատակով:

4.2.2 Նոր համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիությունը գնահատելու հայտի (Հավելված PR-4.6.3-01) և ստուգաթերթի (Հավելվածներ PR-4.6.3-02) ձևաչափերը տեղադրված են www.armnab.am պաշտոնական կայքում:

4.2.3 Հայտը ստանալուց հետո ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի տեղակալի կողմից ընտրված գնահատման խմբի ղեկավարը 8 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է հայտի

և կից փաստաթղթերի լրակազմը և ձևաչափերը: Լրակազմ լինելու դեպքում հայտը գրանցվում է, գրանցման մասին տեղեկացվում է հայտատուին:

4.2.4 Փաստաթղթերը սահմանված ձևանմուշներին չհամապատասխանելու կամ լրակազմ չլինելու դեպքում ԱՐՄՆԱԲ-ը ծանուցում է ՀԳՄ-ին և առաջարկում 5 օրվա ընթացքում վերացնել թերությունները: Դրանք չվերացնելու դեպքում հայտի գրանցումը մերժվում է ՝ նշելով մերժման հիմքերը:

4.2.5 Գնահատման խմբի ղեկավարն իրականացնում է՝

- ՀԳՍ-ի ոլորտի նախագծի վերլուծություն,

- տեխնիկական գնահատողների, տեխնիկական փորձագետների առկայության և հասանելիության վերլուծություն:

4.2.6 Հայտը գրանցելուց հետո ԱՐՄՆԱԲ-ի և ՀԳՄ-ի միջև ԱՐՄՆԱԲ-ի կողմից հաստատված օրինակելի ձևին (Հավելված Ա) համապատասխան կնքվում է պայմանագիր, որով սահմանված վճարումը կատարելուց հետո սկսվում է ՀԳՍ-ի պիտանիության գնահատման գործընթացը:

4.2.7 Պայմանագրում նշված վճարումը չկատարելը հիմք է հանդիսանում ՀԳՍ-ի գնահատումը մերժելու համար:

4.2.8 Պայմանագիրը կնքելուց և ՀԳՄ-ի կողմից վճարումը կատարելուց հետո ԱՐՄՆԱԲ-ը ձևավորում է գնահատման խումբ՝ կազմված գնահատման խմբի ղեկավարից, ով հանդիսանում է ԱՐՄՆԱԲ-ի հաստիքային աշխատակից և ՀԳՍ-ի ոլորտին համապատասխան կառավարման համակարգի գնահատողից, տեխնիկական գնահատող(ներ)ից և տեխնիկական փորձագետ(ներ)ից: Կառավարման համակարգի գնահատողի, տեխնիկական գնահատողների/փորձագետների ընտրությունը կատարվում է այնպես, որ նրանց իրազեկության ոլորտը ընդգրկի ՀԳՍ-ի ողջ շրջանակը: Գնահատման խմբում ընդգրկված անդամների թիվը կախված է ՀԳՍ-ի բարդությունից և ծավալից:

Սխեմայի գնահատման ընթացակարգում ընդգրկված գնահատման խմբի անդամների իրազեկության պահանջները սահմանվում են այնպես, ինչպես

նկարագրված է ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտում կառավարման համակարգի, տեխնիկական գնահատողների կամ տեխնիկական փորձագետների համար:

4.3 ՀԳՍ-ի գնահատումը (տևողությունը՝ 3-ից 8 ամիս)

4.3.1 Նոր ՀԳՍ-ի գնահատման գործընթացը ներառում է.

1) ՀԳՍ-ի մանրամասն տեխնիկական վերլուծություն, որն իրականացվում է գնահատման խմբի կողմից և ստուգաթերթ-հաշվետվության կազմում,

2) գնահատման խմբի կողմից անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում՝ լրամշակված ՀԳՍ-ի վերաբերյալ լրացուցիչ հաշվետվության կազմում,

3) անհամապատասխանությունների բացակայության դեպքում ՀԳՍ-ի վերաբերյալ որոշում կայացնող սխեմայի հանձնաժողովի (այսուհետ՝ ՍՀ) կողմից փաստաթղթերի ուսումնասիրություն և որոշման կայացնում:

4.3.2 Եթե ՀԳՍ-ն մշակվել է իրավական ակտերով սահմանված տեխնիկական պահանջների (կանոնակարգման ոլորտ) հիման վրա, ապա անհրաժեշտ է տվյալ ոլորտի լիազոր պետական կառավարման մարմնի կողմից տեխնիկական փորձաքննության իրականացում: Փորձաքննության նպատակով ՀԳՍ-ն կամ տրամադրվում է այդ լիազոր պետական կառավարման մարմնին համաձայնեցմանը, կամ մարմնի համապատասխան մասնագետ(ներ)ը ներգրավվում են ՀԳՍ-ի գնահատման աշխատանքներում: Եթե ՍՍ իր նախաձեռնությամբ ՀԳՍ-ն համաձայնեցնում է տվյալ ոլորտի լիազոր պետական կառավարման մարմնի հետ, ապա ԱՐՄՆԱԲ-ը կարող է կրկնակի անգամ չհամաձայնեցնել:

4.3.3 Եթե 10-15 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր պետական կառավարման մարմնից պատասխան չի ստացվում, ապա ԱՐՄՆԱԲ-ը շարունակում է ՀԳՍ-ի գնահատումը:

4.3.4 Եթե ՀԳՍ-ի գնահատման կամ չափորոշիչների հաստատման գործընթացում՝ օրենքով սահմանված կարգավորումների հիման վրա (օրինակ՝ օրգանական արտադրանքի, աշխարհագրական նշումով արտադրանքի սերտիֆիկացում), անհրաժեշտ է ներգրավել լիազոր պետական կառավարման մարմնին, ապա տեխնիկական փորձաքննության իրականացումը կատարվում է նրանց

կողմից: Լիազոր պետական կառավարման մարմնի կողմից տրվող ցանկացած չափորոշիչների/ընթացակարգերի հաստատում կատարվում է առանձին իրավական ակտով՝ սույն ընթացակարգից դուրս:

4.3.5 Օրենքով սահմանված կարգավորումներով պայմանավորված չափանիշների/ընթացակարգերի (մակարդակ 4/5) հաստատում պահանջող ՀԳՍ-ների դեպքում (տե՛ս 4.3.4 կետը) որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթերը ՍՀ-ին ներկայացվում է միայն համապատասխան լիազոր պետական մարմնի կողմից հաստատվելուց հետո:

4.3.6 ՀԳՍ-ում տեխնիկական պահանջների բացակայության դեպքում ԱՐՄՆԱԲ-ը տեղեկացնում է ՍՍ-ին, որ գնահատման գործընթացը չի կարող շարունակվել:

4.3.7 Տեխնիկական վերլուծության բացասական եզրակացության դեպքում ԱՐՄՆԱԲ-ը այն ներկայացնում է ՍՍ-ին համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով:

4.3.8 Գնահատման խումբն ամփոփում է հայտատուից ստացված տեղեկատվությունը, լիազոր պետական կառավարման մարմնից ստացված եզրակացությունները (կիրառելիության դեպքում), անհրաժեշտության դեպքում արդյունքները վերլուծելու նպատակով: Գնահատման խմբի կողմից դրական եզրակացության դեպքում գնահատման խմբի ղեկավարը ՍՀ-ին ներկայացնելու և նիստ հրավիրելու նպատակով նախապատրաստում է ստուգաթերթ-հաշվետվություն (համաձայն PR-4.6.3-02 ձևաչափի):

4.3.9 Գնահատման խմբի կողմից բացասական եզրակացության դեպքում ստուգաթերթ-հաշվետվությունը ներկայացվում է ՍՍ: այդ դեպքում սխեմայի հանձնաժողով չի ստեղծվում:

4.3.10 ՀԳՍ-ի արդիականացման կամ փոփոխություն դեպքում ՍՍ-ն ԱՐՄՆԱԲ-ին է տրամադրում տեղեկատվություն կատարված փոփոխությունների վերաբերյալ: ԱՐՄՆԱԲ-ը իրականացնում է նախնական գնահատում, որի արդյունքում որոշում է կայացվում պահպանել համապատասխանության գնահատման սխեմայի

պիտանիությունը, իսկ զգալի փոփոխությունների դեպքում իրականացվում է ՀԳՍ-ի գնահատում սույն ընթացակարգի համաձայն:

4.4 ՍՀ-ի կողմից ՀԳՍ-ի վերլուծությունը և որոշման կայացումը (2 շաբաթվա ընթացքում)

Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում դրանք վերացնելուց հետո գնահատման խումբն իրականացնում է ՀԳՍ-ի լրացուցիչ փորձաքննություն և դրական եզրակացության/հաշվետվության դեպքում տրամադրում է ՍՀ-ին՝ սխեմայի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով (Հավելված PR-4.6.3-03): ՍՀ-ն համապատասխան որոշումն ընդունում է՝ հիմք ընդունելով գնահատման խմբի ղեկավարի ստուգաթերթ-հաշվետվությունը, կիրառելիության դեպքում՝ նաև լիազոր պետական մարմնի կողմից հաստատումը, անհամապատասխանությունները վերացնելու վերաբերյալ հայտատուի ուղղիչ գործողությունները:

4.5 Հավատարմագրման դիմելու իրավասության հաստատում/մերժում (1 շաբաթվա ընթացքում)

Հիմք ընդունելով ՍՀ-ի կողմից ընդունած որոշումը՝ ԱՐՄՆԱԲ-ի տնօրենը հայտատուին գրությամբ տեղեկացնում է ՀԳՄ-ին՝ տվյալ սխեմայով հավատարմագրման դիմելու կամ չդիմելու իրավասության մասին:

4.6 Գնահատված ՀԳՍ-երի վերաբերյալ տեղեկատվությունը

Եթե սխեմայի սեփականատերը կիրառում է համապատասխանության նշաններ՝ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17030-ի և ցանկանում է այդ նշանները հանրությանը հասանելի դարձնել ԱՐՄՆԱԲ-ի կայքի միջոցով, ապա այդ նշանը նախապես տրամադրվում է ԱՐՄՆԱԲ-ին:

4.7 EA 1/22, IAF MD 25 փաստաթղթերին համապատասխան ՀԳՍ-ների վերլուծության հատուկ պահանջները

Հավատարմագրման եվրոպական համագործակցության (EA) հետ ԱՐՄՆԱԲ-ի համագործակցությունը EA 1/22, IAF MD 25 փաստաթղթերով սահմանված դրույթների համապատասխան կիրականացվի ԱՐՄՆԱԲ-ի EA MLA ստորագրող կողմ դառնալուց հետո:

ՀԳՍ-ները, որոնք արդեն գնահատվել են IAF-ի, EA-ի ստորագրող կողմ հանդիսացող հավատարմագրման մարմնի կողմից համաձայն IAF-ի, EA-ի կանոնների, չեն վերագնահատվում ԱՐՄՆԱԲ-ի կողմից: ԱՐՄՆԱԲ-ը ճանաչում է նրանց կողմից իրականացված փորձաքննությունը՝ պայմանով, որ դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական կարգավորումներին: Այդպիսի ՀԳՍ-ները ուսումնասիրվում են հավատարմագրման ընթացակարգի շրջանակներում:

5. Սխեմայի վերաբերյալ որոշում կայացնող հանձնաժողովի (ՍՀ) կազմը և գործունեությունը

5.1 ՀԳՍ-ի կիրառման վերաբերյալ որոշում կայացնելու համար ստեղծված ՍՀ-ի կազմը փոփոխական է և հաստատվում է ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի հրամանով:

5.2 ՍՀ-ն պետք է կազմված լինի առնվազն 3 անդամից: Գնահատման խմբի ղեկավարը հրավիրում է ՍՀ նիստ և նախագահում այն առանց ձայնի իրավունքի: Որպես կանոն, ՍՀ-ի անդամներ նշանակվում են հավատարմագրման բաժնի պետը, հավատարմագրման բաժնի գնահատողը, ով իրազեկ է որոշումներ կայացնել հիմնադրական ստանդարտի (3-րդ մակարդակ) վերաբերյալ, որի վրա տարածվում է տվյալ սխեման, ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի տեղակալը: Կախված ՀԳՍ-ի բարդությունից ՍՀ-ի կազմը կարող է ընդլայնվել, օրինակ՝ ներառել ՀԳՍ-ի ոլորտին առնչվող լիազոր պետական մարմնի ներկայացուցիչ(ներ) կամ այլ իրազեկ մասնագետներ:

5.3 ՍՀ-ի նիստերը կարող են կազմակերպվել նաև հարցման կարգով (էլեկտրոնային փոստով) կամ տեսակոնֆերանսի միջոցով:

5.4 ՍՀ անդամները ստորագրում են «Անկողմնակալության և գաղտնիության վերաբերյալ հայտարարագիր (PR-7, Հավելված Ա):

6 Համապատասխանության գնահատման սխեմաների պահանջները (IAF մակարդակ 3 և 4)

6.1 Համապատասխանության գնահատման սխեմաների ընդհանուր պահանջները (EA 1/22 / ԻՍՕ/ԻԷԿ 17067 / ԻՍՕ/ԻԷԿ 17000 Հավելված Ա / ԻՍՕ/ԻԷԿ 17030)

6.1.1 Համապատասխանության գնահատման սխեման հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների կողմից կիրառվող տեխնիկական մասնագրերն են, որոնք արտադրանքի, ծառայության, գործընթացի, համակարգի, անձի սերտիֆիկացման կամ հսկողության միջոցով համապատասխանության գնահատման համար՝ համապատասխանության գնահատման ապացույցների հետ կապված հայտարարությունը (օրինակ՝ սերտիֆիկատ, հսկողության հաշվետվություն և այլն) հետագծելի, համակարգված և հուսալի ձևով կատարելու նպատակով սահմանում են հատուկ պահանջներ, կանոններ, նմուշների ընտրության, փորձարկման և գնահատման ընթացակարգեր:

6.1.2 Համապատասխանության գնահատման սխեմայի դրույթները միշտ վերաբերում են IAF-ի 4-րդ մակարդակի պահանջներին՝ համաձայն EA-MLA 1/06 փաստաթղթի, որը նկարագրում է ՀԳՄ-ի գործունեությունը: Թույլատրվում է սխեմայով սահմանել համապատասխանության օբյեկտի չափանիշներ (5-րդ մակարդակ), եթե ազգային կամ միջազգային ստանդարտները բացակայում են կամ բավարար չեն: Նման չափանիշները պետք է համապատասխանեն ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17007 ստանդարտի պահանջներին:

6.1.3 Համապատասխանության գնահատման սխեման, ընդհանուր և կիրառելի լինելու առումով, պետք է ներառի ԻՍՕ/ԻԷԿ 17000 ստանդարտի Հավելված Ա-ում սահմանված տիպային տարրերը:

6.1.4 Համապատասխանության նշանների կիրառման դեպքում պետք է պահպանվեն ԻՍՕ/ԻԷԿ 17030 ստանդարտի պահանջները: Սա ենթադրում է, որ պահանջների չափանիշները պետք է լինեն հանրային հասանելի, ինչպես նաև որ վերահսկողության միջոցառումները պետք է միշտ հստակ սահմանված լինեն:

6.1.5 ԻՍՕ/ԻԷԿ 17067 ստանդարտը ուղեցույց է արտադրանքի, գործընթացների և ծառայությունների սերտիֆիկացման սխեմաների ընկալման, մշակման, կիրառման կամ պահպանման համար: Հիմնական մասնագրերը/բնութագրերը սահմանելու համար կարող են հիմք ընդունվել ստանդարտի հետևյալ կետերը՝

- սխեմաների տեսակները (կետ 5.3),
- սխեմայի սեփականատիրոջ պաշտոնը (կետ 6.3),
- սխեմայի մշակումը (կետ 6.4),
- սխեմայի բովանդակությունը (կետ 6.5),
- սխեմայի պահպանում և կատարելագործում (կետ 6.6՝ ԻՍՕ/ԻԷԿ 17030-ի 6.4 կետի հետ համատեղ),
- սխեմայի փաստաթղթերը (կետ 6.7):

6.1.6 Համապատասխանության գնահատման սխեմայի բնորոշ տարրերը և ներքին կառուցվածքը ներկայացված են ԻՍՕ/ԻԷԿ 17067 ստանդարտի 1-ին աղյուսակում և կարող են կիրառվել որպես օրինակ բոլոր ՀԳՍ-ների մշակման համար, հատկապես հսկողության սխեմաների համար:

6.1.7 Համապատասխանության գնահատման յուրաքանչյուր սխեման պետք է ձևակերպվի այն կիրառելու անհրաժեշտության մասին կոնկրետ հայտարարություններով, կիրառելիության դեպքում՝ ներառելով օբյեկտի ընտրության, գնահատման, ստուգման, հավաստման և մոնիթորինգի վերաբերյալ դրույթները, որոնց վերաբերյալ ապացույցները ԱՐՄՆԱԲ-ի կողմից գնահատվում են տեղում գնահատման ընթացքում:

6.1.8 Հնարավորության դեպքում պետք է առաջնորդվել ԻՍՕ/ԻԷԿ 17067 ստանդարտով սահմանված սխեմայի տեսակներով: Եթե հայտատուն համարում է, որ սխեմաների այդ տեսակները հարմար չեն իր գործունեությունն իրականացնելու համար, ապա պետք է հիմնավորի սխեմայից շեղումները:

6.1.9 Օրենքով սահմանված կարգավորումներով պայմանավորված չափանիշների/ընթացակարգերի մշակման դեպքում պետք է նաև նկարագրվի, թե որքանով կարող են ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17007 ստանդարտի սկզբունքները կիրառվել

համապատասխանության գնահատման նպատակներով, անհրաժեշտության դեպքում՝ սխեմայում լրացումներ կատարելու միջոցով:

6.2 Համապատասխանության գնահատման սխեմաների նվազագույն պահանջները (ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 Հավելված Ա)

6.2.1 ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 Հավելված Ա.2 (A.2) «Ընտրությունը»

1) Համապատասխանության գնահատման օբյեկտի նկարագրությունը և սահմանափակումները (ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000, Հավելված Ա, Ա.2.3):

2) Համապատասխանության գնահատման օբյեկտի նկատմամբ պահանջների նկարագրությունը (IAF/EA Մակարդակ 5), օրինակ՝ օրենքներից, միջազգային ստանդարտներից կամ տեխնիկական կանոնակարգերից բխող պահանջներ, ինչպես նաև այն մասնագիտական կարողությունները, որոնք անհրաժեշտ են գնահատման և դրա կատարման հաստատման համար՝ համապատասխանության գնահատման օբյեկտը հավաստելու նպատակով:

3) Այդ պահանջները, որպես կանոն, պետք է լինեն միջազգային ստանդարտներ կամ ոլորտում ընդունված ստանդարտներ կամ բնութագրեր, ինչպես նաև արտադրողների խմբի կողմից սահմանված բնութագրեր:

4) Պետք է նկարագրված լինեն սխեմայի պլանավորման և նախապատրաստման համար անհրաժեշտ գործողությունները, ինչպես նաև նմուշառման ընթացակարգերի կամ նմուշառման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ցանկացած անհրաժեշտ գործողությունների նկարագրությունը:

5) Անհրաժեշտ է տրամադրել տեղեկատվություն սխեմայի մշակման համար ուսումնասիրված և հավաքված տեղեկատվության ամբողջականության ու հավաստիության վերաբերյալ: Մասնավորապես, երբ տվյալները տրամադրվում են արտադրողի կողմից, պետք է նշվի, թե ինչպես կարող է այդ տվյալների ամբողջականությունն ապահովվել ՀԳՄ-ի կողմից գնահատումների կամ այլ հսկողության տեսակների միջոցով:

6) Եթե սխեման ներառում է նմուշառում, ապա պետք է տեղեկատվություն տրամադրվի նմուշառման այն մեթոդի մասին, որը կիրառվում է հետևողական և

վերարտադրելի արդյունքներ ստանալու համար: Պետք է կիրառվեն այնպիսի նմուշառման մեթոդներ, որոնք հիմնված են վիճակագրական մեթոդների վրա կամ վկայակոչված են միջազգային ստանդարտներում:

6.2.2 ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 Հավելված Ա.3 (A.3) «Սահմանումը»

1) Պետք է ներկայացվի համապատասխանության գնահատման օբյեկտի կամ դրա նմուշի սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու նպատակով մեկ կամ մի քանի որոշման մեթոդների (օրինակ՝ փորձարկում, աուդիտ և/կամ քննություն) կիրառման ցուցադրումը:

2) Սերիական արտադրանքների կամ ծառայությունների դեպքում պետք է նկարագրվի, թե ինչպես է վիճակագրական մեթոդների միջոցով ապահովվում ներկայացուցչական որոշումը:

3) Որպես կանոն, պետք է ներկայացվեն համապատասխանության գնահատման լավագույն փորձի կիրառման ապացույցներ (տես ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17007, կետ 4.6):

4) Եթե կատարվում է շեղում լավագույն ընթացակարգերից, ապա դա պետք է մանրամասն նկարագրվի՝ շեղման պատճառների հիմնավորմամբ:

6.2.3 ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 Ա.4 (A.4) «Վերլուծությունը»

Պետք է նկարագրվի ընթացակարգը, որով ստուգվում են համապատասխանության որոշման փուլում ձեռք բերված ապացույցները՝ որոշելու համար, թե արդյոք կատարվել են սահմանված պահանջները: Պետք է պահպանվեն համապատասխան հավատարմագրման ստանդարտների պահանջները (ԻՍՕ/ԻԷԿ 17065, ԻՍՕ/ԻԷԿ 17021-1, ԻՍՕ/ԻԷԿ 17020, ԻՍՕ/ԻԷԿ 17024 և այլն):

6.2.4 ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 Ա.4 (A.4) «Որոշման կայացումը»

Պետք է նկարագրվեն այն չափանիշները, որոնք հանդիսանում են նախապայման հետևյալ գործողությունների համար՝ համապատասխանության հավաստում, պահպանում, ընդլայնում, կրճատում, կասեցում կամ դադարեցում: Չափանիշները պետք է ցուցադրեն, թե երբ են անհամապատասխանությունները դասվում կրիտիկական: Անհրաժեշտության դեպքում պետք է նկարագրվեն անհամապատասխանությունների/թերությունների դասակարգման համակարգերը:

6.2.5 ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 Ա.4 (A.4) «Համապատասխանության հավաստումը/հաստատումը»

Պետք է նկարագրվի վերլուծության և համապատասխանության հավաստման գործընթացը, որը ներառում է որոշման փուլում ձեռք բերված ապացույցների վերանայումն ու հետևաբար գնահատման օբյեկտի համապատասխանության հավաստումը/հաստատումը սահմանված պահանջներին և հսկողության գործընթացը (ԻՍՕ/ԻԷԿ 17030).

ա. համապատասխանության սերտիֆիկատ կամ այլ համապատասխանության հայտարարություն տրամադրելը,

բ. սերտիֆիկատներ կամ այլ համապատասխանության հայտարարություններ կիրառելու իրավունք տրամադրելը,

գ. համապատասխանության սերտիֆիկատի տրամադրումը արտադրանքի խմբաքանակի և սերիական արտադրանքի համար,

դ. համապատասխանության նշանների (հաստատման) օգտագործման իրավունք տրամադրելը և սահմանափակումները:

6.2.6 ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 Ա.5 (A.5) «Համապատասխանության հսկողությունը»

Պետք է նկարագրվի համապատասխանության հսկողության գործընթացը, որը ներառում է հսկողության գործողությունների և վերագնահատումների միջակայքն ու ծավալը՝ ապահովելու համար, որ համապատասխանության գնահատման օբյեկտը շարունակում է բավարարել սահմանված պահանջները: Պետք է սահմանվեն պարբերական հսկողության գործողությունները՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ և արտահերթ գնահատումները:

6.3 Հատուկ պահանջները

6.2.1 Կառավարման համակարգերի սերտիֆիկացում (ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-1)

Համապատասխանության գնահատման սխեման պետք է ներառի դրա կիրառման անհրաժեշտության վերլուծություն, որը ցույց կտա, թե ինչու և ինչ չափով չեն կարող կիրառվել կառավարման համակարգերի համապատասխանության

գնահատման միջազգային ստանդարտները, ինչպես նաև լրացուցիչ սխեմայի մշակման անհրաժեշտությունը:

6.2.2 Արտադրանքի/գործընթացների/ծառայությունների սերտիֆիկացում (ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065)

Համապատասխանության գնահատման սխեման պետք է ներառի ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17067-ի 6.5 բաժնի բոլոր կետերի վերաբերյալ հայտարարություններ:

Համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17067 կետի 6.5.1 բ) և է)-ի՝ համապատասխանության գնահատման օբյեկտի յուրաքանչյուր բնութագրին, նորմին ներկայացվող պահանջի համար պետք է նշվի գնահատման կոնկրետ տեսակը/մեթոդը (5-րդ մակարդակի իրավական պահանջ/ստանդարտ/հաստատված չափանիշներ):

Եթե գնահատման մեթոդները կամ ընթացակարգերը ստանդարտացված չեն, դրանք պետք է նկարագրվեն առանձին: Ստանդարտների առկայության դեպքում դրանք պետք է ներկայացվեն հայտի հետ միասին:

6.2.3 Անձանց սերտիֆիկացում (ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17024)

Համապատասխանության գնահատման սխեման պետք է ներառի անձանց որակավորման վերաբերյալ իրավական պահանջների վերլուծություն, մասնավորապես՝ ազգային օրենսդրության շրջանակներում, որպեսզի սխեման հստակ տարանջատվի կրթության օրենսդրորեն կարգավորվող ոլորտից և այլ իրավական պահանջներից:

Այն դեպքում, երբ սխեմայում պարբերական հսկողություն չի նշվում, պետք է արձանագրվի, որ սխեմայի վերանայման ընթացքում անձի գիտելիքներին ներկայացվող պահանջների արդիականացում չի պահանջվում: Բոլոր դեպքերում պահանջվում է վերասերտիֆիկացում:

6.2.4 Հսկողություն (ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020)

Ինչ վերաբերում է ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-ին, ապա կիրառելի փորձարկման մեթոդները (SOP) պետք է հայտի հետ ներկայացվեն ԱՐՄՆԱԲ որպես ապացույց բոլոր փորձարկման և նմուշառման գործողությունների համար՝ համաձայն ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025 կամ ՀՍՏ ԻՍՕ 15189-ի:

Սխեմայով սահմանված յուրաքանչյուր չափանիշի համար պահանջվում է ՀԳՄ-ի մասնագետի/հսկիչի որակավորումների վերաբերյալ որոշում/ապացույց:

7. Հավելվածներ

Հավելված Ա – Պայմանագրի ձևաչափը

Հավելված PR-4.6.3-01 – Նոր համապատասխանության գնահատման սխեմաների պիտանիությունը գնահատելու հայտի ձևաչափը

Հավելված PR-4.6.3-02 – Նոր համապատասխանության գնահատման սխեմաների ստուգաթերթ-հաշվետվության ձևաչափը

Հավելված PR-4.6.3-03 – Նոր համապատասխանության գնահատման սխեմայի հավատարմագրման իրավասության վերաբերյալ որոշման ձևաչափը

Հավելված Ա
(Պայմանագրի ձևաչափը)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Երևան «--------» «----------» 20 թ.

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը, համաձայն իր կանոնադրության, (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ), ի դեմս տնօրեն ---------- մի կողմից, և համապատասխանության գնահատման սխեմայի սեփականատեր

_____

(կազմակերպության անվանումը)

ի դեմս տնօրեն----------, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայն գրանցված N ---- առ «--------» «----------» 20 թ. հայտի՝ ԱՐՄՆԱԲ-ը պարտավորվում է իրականացնել

_____

(համապատասխանության գնահատման մարմնի անվանումը)

(այսուհետ՝ ՀԳՄ) կողմից ներկայացված

_____

(համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների նշագիրը/նշագրերը, անվանում(ներ)ը)

նոր համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատումը՝ համաձայն

_____

(հավատարմագրման ստանդարտի նշագիրը և անվանումը)

ստանդարտի և հավատարմագրման ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, միջազգային, ինչպես նաև ԱՐՄՆԱԲ-ի փաստաթղթերով սահմանված պահանջների, իսկ ՀԳՄ-ն իր հերթին պարտավորվում է կատարել վերը նշված փաստաթղթ(եր)ով սահմանված պահանջները և վճարել գնահատման համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՀԳՄ-ի իրավունքները և պարտականությունները.

2.1.1. ՀԳՄ-ն իրավունք ունի՝

1) պահանջել նոր համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատման արդյունքների հաշվետվությունները.

2) գնահատման գործընթացի յուրաքանչյուր փուլում հետ վերցնել հայտը՝ վճարելով մինչ այդ կատարված աշխատանքների համար.

3) համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատման բացասական որոշման դեպքում գրավոր ստանալ մերժման հիմքերը:

2.1.2. ՀԳՄ-ն պարտավոր է՝

1) ներկայացնել համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատման համար պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակներով.

2) գնահատման աշխատանքների կատարման համար նշանակել ԱՐՄՆԱԲ-ի հետ կապի պատասխանատու.

3) սահմանված ժամկետում կատարել վճարումներ սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատման աշխատանքների իրականացման համար՝ անկախ գնահատման արդյունքներից.

4) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում ԱՐՄՆԱԲ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացնել լրամշակված սխեման/սխեմաները.

5) ԱՐՄՆԱԲ-ին չտրամադրել կեղծ ապացույցներ կամ տեղեկատվություն.

6) գործել ԱՐՄՆԱԲ-ի կողմից մշակված www.armnab.am ԱՐՄՆԱԲ-ի պաշտոնական կայքում տեղադրված PR-4.6.3 «Համապատասխանության գնահատման նոր սխեմայի (սխեմաների) գնահատման չափանիշներն ու ընթացակարգը» փաստաթղթի պահանջներին համապատասխան, և հետևել դրանում կատարված փոփոխություններին.

7) չձեռնարկել որևէ գործունեություն, որը կարող է վնասել կամ վարկաբեկել ԱՐՄՆԱԲ-ին.

8) ԱՐՄՆԱԲ-ին տեղեկացնել համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների ցանկացած արդիականացման կամ փոփոխություն վերաբերյալ և ընդունել սխեմայում կատարված փոփոխությունների վերաբերյալ ԱՐՄՆԱԲ-ի կողմից իրականացրած նախնական գնահատման արդյունքները, որի համաձայն ԱՐՄՆԱԲ-ը կարող է որոշել պահպանել համապատասխանության գնահատման սխեմայի պիտանիությունը, իսկ զգալի փոփոխությունների դեպքում՝ կատարել վճարումները նախքան սխեմայի պիտանիության մանրամասն գնահատումը.

9) գնահատված համապատասխանության գնահատման սխեմայի փոփոխության մասին ԱՐՄՆԱԲ-ին չտեղեկացնելու դեպքում ԱՐՄՆԱԲ-ը կարող է մասնակի կամ լրիվ կասեցնել ՀԳՄ-ի հավատարմագրումը.

9) համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության մասին դրական որոշման դեպքում ՀԳՄ-ն կարող է դիմել հավատարմագրման/հավատարմագրման ընդլայնման:

2.2. ՀԱՄ-ի իրավունքները և պարտականությունները.

2.2.1. ՀԱՄ-ը իրավունք ունի՝

1) պայմանագրով սահմանված ժամկետում ՀԳՄ-ի կողմից վճարում չկատարելու դեպքում մերժել համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատումը (այսուհետ՝ գնահատում).

2) սահմանված ժամկետում ՀԳՄ-ի կողմից համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների լրամշակված տարբերակը չներկայացնելու դեպքում մերժել հայտը:

2.2.2. ՀԱՄ-ը պարտավոր է՝

1) տեղադրել պաշտոնական կայքում PR-4.6.3 «Համապատասխանության գնահատման նոր սխեմայի (սխեմաների) գնահատման չափանիշներն ու ընթացակարգը» փաստաթուղթը, հավատարմագրման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատման հայտը և կից փաստաթղթերի ցանկը.

2) ապահովել PR-4.6.3 ընթացակարգով սահմանված դրույթների կատարումը.

3) համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների մասին դրական կամ բացասական որոշման ընդունման դեպքում ՀԳՄ-ին տեղեկացնել այդ մասին.

4) ապահովել գնահատման ընթացքում ստացված տեղեկատվության գաղտնիությունը և չհրապարակել այդ տեղեկատվությունը առանց ՀԳՄ-ի գրավոր համաձայնության, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2.3. Կողմերն ունեն նաև «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով և ԱՐՄՆԱԲ-ի կողմից հաստատված ընթացակարգերով նախատեսված այլ իրավունքներ և դրանց համապատասխան կրում են այլ պարտականություններ:

3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատման արժեքը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի մարտի 6-ի «Հավատարմագրման ազգային մարմնի և համապատասխանության գնահատման մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա հավատարմագրման ազգային մարմնի կողմից կատարված հավատարմագրման ծառայությունների, գնահատումների համար համապատասխանության գնահատման մարմնի կողմից իրականացվող վճարման, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմնի տարեկան անդամավճարի վճարման չափը և կարգը հաստատելու մասին» N 311-Ն հրամանով սահմանված կարգին և ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի հրամանով հաստատված K-08 «Հավատարմագրման փորձագետի (գնահատողի)/տեխնիկական գնահատողի, փորձագետի կողմից կատարված աշխատանքի վճարման կարգ»-ին համապատասխան, որը կազմում է՝ _____ դրամ:

3.2. Համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատման վճարումները ՀԳՄ-ն կատարում է համաձայն ներկայացված հաշվի՝ 10 բանկային օրվա ընթացքում:

3.3. Սույն պայմանագրով նախատեսված գնահատման աշխատանքների համար գանձվող գումարը ենթակա չէ վերահաշվարկի:

3.4. Գնահատման աշխատանքները համարվում են ավարտված ԱՐՄՆԱԲ-ի կողմից ՀԳՄ-ին ներկայացված կատարողական ակտի և հաշիվ-ապրանքագրի ստորագրման պահից:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, համաճարակային հիվանդությունները, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

5.1. Պայմանագիրը լուծվում է՝

1) ԱՐՄՆԱԲ-ի կողմից համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների փաստաթղթերի վերլուծության ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում.

2) սահմանված ժամկետում վճարումներ չկատարելու դեպքում.

3) համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների պիտանիության գնահատման վերաբերյալ բացասական որոշման ընդունման դեպքում.

4) ՀԳՄ-ի լուծարման դեպքում.

5) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ԱՐՄՆԱԲ-ի կողմից համապատասխանության գնահատման սխեմայի/սխեմաների մասին համապատասխան որոշման ընդունումը, եթե կողմերից մեկը պայմանագիրը վաղաժամկետ լուծելու գործընթաց չի նախաձեռնել:

6.2. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3. Կողմերը պարտավորվում են այմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը և (կամ) տարաձայնությունները լուծել բանակցությունների միջոցով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճը լուծելու դատական կարգով:

6.4. Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն ունեն իրավաբանական ուժ, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագրով:

6.5. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հայտատու կազմակերպություն	Հավատարմագրման ազգային մարմին
---------- (կազմակերպության անվանումը)	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ
---------- (իրավաբանական անձի գտնվելու և գործունեության իրականացման վայրը)	ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հեռախոս ---------- Ֆաքս ----------	Հեռախոս ---------- Ֆաքս ----------

Բանկի անվանումը h/h ---------- ՀՎՀՀ ----------	Կենտրոնական գանձապետարան h/h 900018003963 ՀՎՀՀ 00116673
Տնօրեն՝ ---------- (անուն, ազգանուն) Կ.Տ. «_____» «_____» 20 թ.	Տնօրեն՝ ---------- (անուն, ազգանուն) Կ.Տ. «_____» «_____» 20 թ.

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Խմբագրությունը		Փոփոխությունը		Փոփոխված կետերը/բառերը	Փոփոխված (նախորդ) տարբերակը	Փոփոխությունը կատարողի ստորագրությունը
Հ/Հ	Հաստատման ամսաթիվը	Հ/Հ	Հաստատման ամսաթիվը			
2	07.01.2026թ.			Տեքստը և հավելվածները	1-ին խմբ., 10.01.2025թ.	